

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

«___» _____ 2016թ., N ___-Ն

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ «ՄԱՏԵՆԱՊԱՐԱՆ» ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՅԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՊԵՏԱԿԱՆ ՈՁ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 15-Ի N 705-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ստեղծել «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության «Մատենադարան-Գանձասար» գիտամշակութային կենտրոն» մասնաճյուղ (այսուհետ՝ մասնաճյուղ):

2. Ընդունել ի գիտություն, որ մասնաճյուղը գործելու է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության «Գանձասար» վանական համալիրի նախկին դպրատան տարածքում՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությանը և իր կանոնադրությանը համապատասխան:

3. Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի մայիսի 15-ի «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 12-ի թիվ 1885-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 705-Ն որոշման հավելվածում՝

1) լրացնել նոր 7.1-րդ կետ հետևյալ բովանդակությամբ՝

«7.1. Մատենադարանի մասնաճյուղն է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության «Մատենադարան-Գանձասար» գիտամշակութային կենտրոն»-ը:»,

2) 16-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության մեջ «պահպանումը» բառից առաջ լրացնել «ձեռքբերումը,» բառը,

3) 21-րդ կետից հանել «՝ մեկ աղբյուրից գնումների կատարման ձևով» բառերը,

4) 32-րդ կետի 3-րդ ենթակետում «ընտրությունը» բառը փոխարինել «մասնաճյուղի ղեկավարի ընտրությունները» բառերով:

4. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում ապահովել «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ սույն որոշումից բխող փոփոխությունների գրանցումը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրվանից:

ՀՀ կրթության և գիտության նախարար Լևոն Մկրտչյան

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ

Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում պահվում են հարյուրավոր բացառիկ ձեռագրեր ու հազվագյուտ արխիվային փաստաթղթեր, որոնք գրվել են Արցախում և ներկայացնում-լուսաբանում են Արցախի հոգևոր մշակույթն ու նրա պատմական ժառանգությունը:

Այդ արժեքների հանրահռչակման, դրանց ուսումնասիրության խթանման նպատակով Գանձասարի վանական համալիրին կից, «Փյունիկ» համահայկական հիմնադրամի ներդրումների շնորհիվ վերակերտված կառույցում 2015թ. նոյեմբերի 21-ին բացվեց պատմական Հայաստանի Արցախ և այլ նահանգներում գրչագրված 100-ից ավելի ձեռագիր մատյանների, Արցախի պատմությանն առնչվող հազվագյուտ բնագրերի ու ընդօրինակությունների, վավերագրերի, հնատիպ գրքերի, ինչպես նաեւ պատմական հանգամանքների բերումով Արցախի վանքերում և եկեղեցիներում այլ շրջաններից բերված կամ փրկագնված ձեռագրերի ցուցադրությունը՝ մասնակցությամբ Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահների, պետական ու հոգևոր այրերի:

Ցուցադրության կարևոր մասն են կազմում Գանձասար վանական համալիրում գրված ձեռագրերն ու վավերագրերը:

Իրադարձային այս նախաձեռնության շարունակականությունն ապահովելու, Արցախի հոգևոր ժառանգությունը միջազգայնացնելու համար նպատակահարմար է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գանձասար վանական համալիրին կից տարածքում ստեղծել «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության մասնաճյուղ:

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Պետական բյուջեի կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեների վրա ազդեցությունը					
Ցուցանիշներ	ընթացիկ(№-րդ) տարի		Հաջորդող 3 տարիները		
	Ըստ № - րդ տարվա պետական բյուջեի	Փոփոխությունը № - րդ տարվա պետական բյուջեի համեմատ	№ +1	№ +2	№ +3
			Փոփոխությունն ընթացիկ տարվա համեմատ (№) 2017թ.	Փոփոխությունն ընթացիկ տարվա համեմատ (№) 2018թ.	Փոփոխությունն ընթացիկ տարվա համեմատ (№) 2019թ.
1	2	3	4	5	6
1. Եկամուտներ					
1.1. պետական բյուջեի եկամուտներ					
1.2. ՏԻՄ եկամուտներ					
2. Ծախսեր	533474,2		16000,0	36300,0	39930,0
2.1. պետական բյուջեի ծախսեր	533474,2		16000,0	36300,0	39930,0
2.2. ՏԻՄ բյուջեի ծախսեր					
3. Ֆիսկալ ազդեցության գնահատական					
3.1. պետական բյուջե					
3.3. ՏԻՄ բյուջե					
4. Եկամուտների և ծախսերի հաշվարկների մանրամասնների կայացում (անհրաժեշտության դեպքում կարող է ներկայացվել հավելվածի տեսքով):	Աշխատավարձ		8000,0	27500,0	30250,0
	Էներգետիկ ծառ.		4600,0	5060,0	5566,0
	Գազի ծառ.		1800,0	1980,0	2178,0
	Ջուր		200,0	220,0	242,0
	Կապ		350,0	385,0	423,5
	Աղբահանություն		50,0	55,0	60,5
	Գույքի, սարքավ. ձեռք.		500,0	550,0	605,0
	Տնտեսական ծախս.		500,0	550,0	605,0
4.1. Եկամուտների գնահատում					
4.2. Ծախսերի գնահատում					
5. Այլ տեղեկություններ (եթե այդպիսիք առկա են)					

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

**ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**

Հ / Հ	Առաջարկության հեղինակը, գրության ամսաթիվը, գրության համարը	Առաջարկության, դիտողության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունը
1	2	3	4	5
1	Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն 2016-10-24 թիվ 01/13.25/5370-16	Նախագծի 2-րդ կետում ներառել նաև անշարժ գույքի մակերեսի չափը	չի ընդունվել	մասնաճյուղը գործելու է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության «Գանձասար» վանական համալիրին կից տարածքում
2	Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն 2016-10-27 թիվ 01/1.1/5275-16	առաջակություններ ու դիտողություններ չկան		
3	Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն 2016-10-28 թիվ 01/83-2/24487-16 2016-11-21 թիվ 01/83-2/25857-16	Նախագիծը չի համապատասխանում ՀՀ կառավարության 05.04.2012թ. կայացած նիստի N 13 արձանագրության 1-ին կետով հաստատված՝ «Իրավական ակտերի նախագծերի մշակման մեթոդական ցուցումներ» հավելվածի 14.4- րդ կետի պահանջներին, մասնավորապես՝ բացակայում է մասնաճյուղի ստեղծման համար անհրաժեշտ ծախսերի ֆինանսական գնահատականը և ֆինանսավորման աղբյուրը: 1. Նախագծում նախատեսել դրույթ, որով կապահովվի Նախագծից բխող՝ «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ» պետական ոչ	ընդունվել է 1. չի ընդունվել 2. ընդունվել է	կատարված է 1. առաջարկությունը ունի հստակեցման կարիք 2. կատարված է

		<p>անևտրային կազմակերպության կանոնադրության մեջ համապատասխան փոփոխության կատարումը:</p> <p>2. Նախագծի 4-րդ կետում ճշգրտել 1-ին ենթակետի համարակալումը:</p>		
4	<p>Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն 2016-11-23 թիվ 01/14/15321-16</p>	<p>1. Նախագծի 4-րդ կետում «7.1 կետով» բառերն անհրաժեշտ է փոխարինել «7.1 կետ» բառերով՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթները:</p> <p>2. Նախագծի 4-րդ կետով լրացվող ենթակետն անհրաժեշտ է համարակալել՝ նկատի ունենալով, որ վերջինս հանդիսանում է 4-րդ կետի 1-ին ենթակետը, իսկ արդեն լրացվող դրույթներից առաջ նախատեսված համարակալումն անհրաժեշտ է հանել՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի դրույթները:</p> <p>3. Նախագծի 4-րդ կետի 4-րդ ենթակետում «,մասնաճյուղի ղեկավարի ընտրությունները» բառերից հետո անհրաժեշտ է լրացնել «բառերով:» բառը՝ համաձայն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի պահանջների:</p>	<p>ընդունվել է</p>	<p>կատարված է</p>